

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

ARCHBISHOP HOVNAN DERDERIAN

ԽՈՍՏՈՒՄ

ՆՈՐՈՎԻ ԿԵԱՆՔԸ ԱՊՐԵԼՈՒ

**THE PROMISE
To Lead a New Life**

2019

Ազնիւ մեկենասութեամբ՝

ՊԵՐՃ ՌԻՉԱՐԴՏ ՍՎԱԶԼԵԱՆԻ

Ի Յիշատակ իր սիրեցեալ մօր

ՌԵԲԵԿԱ ՍՎԱԶԼԵԱՆԻ



This publication was made possible
through the generous contribution of

BERJ RICHARD SVAZLIAN

In Loving Memory of his mother

REBECCA SVAZLIAN

*«Օրհնէ Տէրը, ով իմ անձս,
եւ մի՛ մոռնար անոր բոլոր բարիքները»:*

(Սաղմոս 103:1)



ՄԵԾ ՊԱՀՔ

«Տէր իմ զքեզ ապաւին ինձ արարի. ուստ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ»:

Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութիւնը քրիստոնեայի կեանքին մէջ այն ժամանակաշրջանն է, երբ մենք մեզ ամբողջութեամբ յանձնատուր կ'ըլլանք Աստուծոյ, որպէսզի աղօթքով ու պահեցողութեամբ, առանձնակի խոկումի պահերով բարձրանանք առ Ամենակարողն Աստուած եւ նորովի կեանք ապրելու խոստումը կատարենք խորապէս ըմբռնելու համար կեանքի իմաստը, եւ աւելին՝ ըմբռնելու խորհուրդը Քրիստոսի Յարութեան, որ մեկնակէտն է Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան:

Ինչքան հոգենորոգ են աղօթքի բառերը եւ տեղին բոլորիս համար, երբ ուղղութիւն կ'որոնենք Մեծ Պահքի ընթացքը

գործնականացնելու եւ պատրաստուելու
Սուրբ Յարութեան Տօնին:

«Տէր իմ զքեզ ապաւեն ինձ արարի.
ուստ ինձ առնել զկամս քո, զի դու ես
Աստուած իմ»:

Արդարեւ, առաջին եւ հիմնական
քայլը զորս պարտ ենք առնելու Մեծ
Պահքի հոգեւոր ճանապարհորդութեանը
ընթացքին այն է, որ Աստուած դարձնենք
ապաւենը մեր կեանքին: Այս քայլը պարտ
ենք որդեգրել այն գիտակցութեամբ, որ
ամբողջութեամբ յանձնատուր ենք Աստու-
ծոյ եւ Աստուած Ինք պիտի առաջնորդէ
մեր կեանքը: Մեր կողմէ առնուած այս
քայլը նախապայման է եւ անկասկած
ապահով, որովհետեւ սկիզբը կը հաստա-
տենք այնպիսի ճանապարհորդութեան
մը, որ պայմանաւորուած է Աստուծոյ
առաջնորդութեամբ, որուն ամբողջ ըն-
թացքը պէտք է լեցուի աղօթքով, եւ պա-
հեցողութիւնը ու հոգեւոր ընթերցումները
դառնան միջոցները, որոնք մեր էութեանը

մինչեւ խորքին պիտի մշակեն Նոր Մարդը՝
ի Քրիստոս:

Մարդը, մենք բոլորս, խիստ անհրա-
ժեշտութիւն ունինք Մեծ Պահքի հոգեւոր
ճանապարհորդութեան, որովհետեւ կեան-
քի վազքին մէջ կամայ թէ ակամայ կը
հեռանանք Աստուծմէ եւ մեր մէջ կը
տկարանայ քրիստոնեայի կոչումը: Եւ
այս ամբողջ ընթացքին պարտ ենք կրկ-
նել աղօթքի այս բառերը, որպէսզի մեր
ուշադրութիւնը կեդրոնացնենք Աստու-
ծոյ կամքին վրայ, «Ուստ ինձ առնել զկամս
քո, զի դու ես Աստուած իմ»:

Բաւական է, որ մենք անկեղծ փա-
փաքն ունենանք Աստուծոյ կամքին հա-
մաձայն կեանք մը ապրելու, եւ Աստուած
ինք կ'ուղղորդէ մեզ եւ կ'ուսուցանէ Իր
կամքը:

Քրիստոնեայի համար Մեծ Պահքը
խաղաղութեան ճանապարհորդութիւն է:
Բուն Բարեկենդանէն մինչեւ Զատիկուայ
առաւօտ մեր օրերը լեցնենք աղօթքով,

ապրինք հնարաւոր չափով պահեցողութեամբ եւ կազմակերպուած ընթերցանութեամբ եւ այն ժամանակ պիտի տեսնենք, որ մեր կեանքը լուսաւոր է եւ օրերը դարձած են աստիճաններ բարձրանալու առ Աստուած: Մեր Եկեղեցւոյ Հայրերը հաստատած են հրաշալի կանոններ ու աղօթքներ, որոնք հոգեւոր գործիքներ են նորոգելու համար մեր կեանքը: Բայց չմոռնանք, որ մտատիպարը Քրիստոս Ինք է, որ Իր առաքելութեան սկզբնաւորութեան գնաց անապատ եւ քառասնօրեայ աղօթքի ու պահեցողութեան ընթացքով Ինքզինք նախապատրաստեց, որպէսզի իր կեանքի օրինակը դառնար նաեւ ճանապարհը մեր առջեւ բացուած:

«Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուստ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ»:

Տէր իմ Աստուած, ճշմարտապէս Դուն ես ապաւէնը իմ կեանքին: Ձեռնամաճ աղօթք կը վերառաքեմ Քեզի, որպէսզի

առաջնորդես քայլերս եւ լուսաւորես
միտքս ու հոգիս, որպէսզի ամէն օր ու
ամէն ժամ կամքդ կատարեմ: Քու պատ-
ուիրաններուդ առաջնորդութեամբ կը
խոստանամ արժեւորել կեանքս, որուն
պարգեւիչն ես Դուն: Եւ գիտեմ, ինչքան
կը լեցուի հոգիս Ս. Աւետարաններէն
ճառագայթող պատգամներով, այնքան
Քու լոյսդ կրնամ բերել մարդկանց կեան-
քին մէջ: Դուն ես ճշմարիտ Աստուածը
ու խոնարհ հոգով ու սրտով եւ մտքով կը
խոստանամ սկսիլ Մեծ Պահքի հոգեւոր
ճանապարհորդութեան, որպէսզի կարող
դառնամ ըմբռնելու Աստուածորդուդ
Յարութեան լոյսը՝ Մեծ Պահքի նախօրէին:

27 Յունուար, 2018

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ՝

ՄԵՐ ԿՈՉՈՒՄԸ

Մուտք

Այս տարի Մեծ Պահքի ճանապարհորդութեան ամենօրեայ խորհրդածութեանց որպէս առաջնորդող պատգամներ քաղած ենք Պօղոս Առաքեալի Հռոմայեցոց ԺԲ (12) գլուխէն: Եւ իրօք, իւրաքանչիւր տող մեզ կ'առաջնորդէ դէպի Աստուած, որպէսզի մեր կեանքը ապրինք Աստուծոյ հետ եւ նոյն կեանքը դարձնենք Քրիստոսի Աւետարաններէն ճառագայթող պատգամներուն ընդունարանը: Բացառաբար Կիրակիները նուիրուած են օրուան խորհուրդին, այնպէս ինչպէս եկեղեցոյ հայրերն են տնօրինած: Իսկ Աւագ Շաբաթը առանձնայատուկ կը տարբերի Քառասնօրեայ պահեցողութեան շրջանէն իր խորհրդաւորութեամբ եւ Քրիստոսի կեանքին նուիրուած հոգելից դրուագներով:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բուն Բարեկենդանը ձեռով մը բացումը կը կատարէ Մեծ Պահքի քառասնօրեայ հոգեւոր ճանապարհորդութեան շրջանին: Այն հրաւեր մըն է ուղղուած ամէն քրիստոնեայի, որպէսզի քառասնօրեայ պահքի շրջանի նախօրէին մենք զմեզ պատրաստ վիճակի մը մէջ դնենք՝ լեցնելու համար մեր հոգիները աստուածային ձայնով եւ օրհնութեամբ:

Բուն Բարեկենդանի օրը ճամբայ կ'ելլենք, որպէսզի քառասուն օրերու աղօթքի եւ պահեցողութեան պատրաստութեան շրջանէ մը ետք դիմաւորենք Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը:

«Գթութեամբն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զխօսուն պաշտօնդ ձեր» (Հռոմ. ԺԲ. 1):

Առաքեալի այս պատգամը հրաւեր մըն է, որպէսզի հաւատքի գիտակցութիւնը ունենանք Աստուծոյ ողորմութեամբ մեր մարմինները պատրաստելու որպէս պատարագ ընծայում, որը պէտք է ըլլայ հաճելի Աստուծոյ: Արդարեւ, պայման է, որ պահքը դառնայ պատրաստութեան շրջան մը նաեւ մեր մարմնին համար, զայն պահելու մաքուր, սուրբ, որպէսզի ե՛ւ մարմնով ե՛ւ հոգով ու սրտով ապրինք հոգեւոր վերածնունդը: Աստուծոյ տուած կեանքը պէտք է գուրգուրանքով պահենք: Եւ ինչքան մարմինը մաքուր պահենք, այնքան եւս այդ գործողութիւնը իր ներազդեցութիւնը կ'ունենայ նաեւ մեր հոգեւոր էութեանը վրայ:

29 Յունուար, 2018

«Եւ մի՛ կերպարանիք կերպարանօր
աշխարհիս այսորիկ...» (Հոռմ. ԺԲ. 2):

Արդարեւ, բարոյական իրաւունքը
չունինք ազդուելու մեր շուրջ կատար-
ուող աշխարհային երեւոյթներէն: Մեր
հոգեւոր կեանքին հայեացքը պիտի ըլ-
լայ Աստուած Ինք: Մեր աղօթքը պիտի
կեդրոնացնենք Աստուծոյ վրայ, որպէսզի
մեր խօսքն ու գործը ըլլան արտայայ-
տութիւնը Աստուծոյ իմաստութեան: Եւ
իբօք, երբ մեր շուրջը կը նայինք, ապա
ամէն վայրկեան պատճառ ունինք սայ-
թաքումի: Բայց երբ աղօթքով կը զրա-
հաւորենք մեր հոգին, միտքն ու սիրտը,
ապա հեռու կը պահենք մեզմէ օտար
խորհուրդները:

3 Փետրուար, 2018

«Այլ նորոգեցարուք ի նորոգութիւն
մտաց ձերոց, առ ի քննել ձեզ զլաւն»
(Հռոմ. ԺԲ. 2):

Մարդուն միտքը մշտապէս պէտք է
նորոգուի Քրիստոսով: Ինչպէս Պօղոս
առաքեալ կը հաղորդէ մեզ իր պատգա-
մով. «Զի ինձ կեանք Քրիստոս է» (Փիլ.
1:21): Ամէն ինչին նորը պայմանաւորուած
է մարդուն հոգեւոր կեանքի նորոգու-
թեամբ: Մտքով պիտի նորոգուինք եւ այն
ժամանակ նոր կեանքի ճանապարհոր-
դութիւնը կը սկսինք: Երբ նորոգուած է
մեր կեանքը, ապա մեզմով կը պայմա-
նաւորենք նաեւ ժամանակին նորոգ-
ուած ըլլալու հանգամանքը:

3 Փետրուար, 2018

«Եւ եթէ զինչ են կամքն Աստուծոյ՝
բարին եւ հաճոյն եւ կատարեալն» (Հռոմ.
ԺԲ. 2):

Աստուծոյ կամքն է, որ մենք մեր
կեանքով բարին արարենք եւ աւելին՝
կատարեալը: Աստուծոյ կամքը կատա-
րելու համար մենք պարտ ենք հոգեւո-
րապէս զինուելու Իր խօսքով, Քրիստոսի
կեանքով, մեր հայրերու հաւատքի վկա-
յութիւններով: Եւ մարդը, որ ստեղծուած է
Աստուծոյ պատկերին համաձայն ան-
տարակոյս ի վիճակի է կատարել Աս-
տուծոյ կամքը՝ բարին, հաճելին ու կա-
տարեալը: Այս է նաեւ նպատակը Մեծ
Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան:

3 Փետրուար, 2018

«Եւ եթէ զինչ են կամքն Աստուծոյ՝
բարին եւ հաճոյն եւ կատարեալն» (Հռոմ.
ԺԲ. 2):

Աստուծոյ կամքը մենք պիտի վերա-
ծենք գործի: Աստուծոյ կամքին բովան-
դակութիւնը ամփոփուած է Քրիստոսի
Անձին եւ վարդապետութեան մէջ:

Ամէն անգամ, երբ խոնարհումով կը
կատարենք Քրիստոսի պատգամներէն
մէկը, կատարած կ'ըլլանք Աստուծոյ
կամքը:

Ով Աստուծոյ կամքը կը կատարէ,
այդպիսին երջանիկ է հոգեւին:

7 Փետրուար, 2018

«Զայս ասեմ շնորհօքն Աստուծոյ որ տուեալ են ինձ, ամենայնի որ է ի ձեզ, մի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ, այլ խորհել ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս եւ բաժանեաց Աստուած չափ հաւատոց» (Հռոմ. ԺԲ. 3):

Առաքեալի այս պատգամը կը պարտաւորեցնէ որ մենք գիտակցութիւնը ունենանք թէ Աստուած բոլորիս բաշխած է հաւատքի պարգեւը: Ուրեմն, ինչ կը մնայ մեզ, եթէ ոչ ի գործ դնել հաւատքը կեանքի կոչել հաւատքի գործերը: Տեսէք թէ ինչպիսի բառեր կը գործածէ առաքեալը. զգաստութեամբ անդրադառնալ տրուած թանկագին նուէրին: Մենք բարոյական իրաւունքը չունինք անտես առնելու կամ մոռնալու տրուած արժէքը: Հետեւաբար, աղօթքի ու պահեցողութեան իմաստն ալ այն է, որ մենք հաւատքը դարձնենք հոգեւոր ուժականութիւնը մեր կեանքին:

29 Յունուար, 2018

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահոց երկրորդ կիրակին կը կոչուի “Արտաքսման Կիրակի”, որ կը յիշեցնէ Ադամի եւ Եւայի արտաքսումը Եդեմական պարտէզէն: Աստուած Ադամը արտաքսեց պարտէզէն անոր անհնազանդութեան պատճառով, անով հանդերձ սակայն, մարդկութեան հնարաւորութիւն տուաւ աղօթքի միջոցով իր էութեան մէջ վերականգնելու ամենակարող Աստուծոյ յաւիտենական պատկերը: Այս բոլորէն աւելի՝ Աստուած մեզի հնարաւորութիւն տուաւ ինքնամաքրման: Այս գաղափարը կը հանդիսանայ Մեծ Պահքի ճանապարհորդութեան վերջնանպատակը, որու ընթացքին աղօթքը, ծումապահութիւնը եւ հոգեւոր ընթերցումները կարեւորագոյն գործօններն են, որոնցմով կը մշակուի մեր մէջ աստուածահաճոյ կեանք ապրելու պատրաստ նոր մարդը:

«Որպէս ի միում մարմնի անդամս
բազումս ունիմք, եւ անդամքն ամենայն
ոչ զնոյն գործ ունին. Նոյնպէս եւ բազումքս
մի մարմին եմք ի Քրիստոս, այլ իւրա-
քանչիւր միմեանց անդամք եմք» (Հռոմ.
ԺԲ. 4-5):

Առաքեալի տուած պատկերը կը պատ-
գամէ ի մասնաւորի այն մասին, որ էա-
կան է մէկզմիւսով տեսնել Եկեղեցւոյ
ամբողջութիւնը: Բոլորիս աղօթանուէր
կեանքով համատեղուած շնորհքներով
ու տաղանդներով աւելի հզօր է Եկեղե-
ցին: Նոյն այս պատգամը կը թելադրէ
նաեւ այն մասին, որ բոլորս հաւասար
ենք Աստուծոյ աչքին եւ իւրաքանչիւրս
ունինք մեզմէ սպասուած պարտակա-
նութիւնները կատարելու գիտակցութի-
ւնը: Ընկերութեան կեանքին մէջ այս
գիտակցութիւնը խաղաղութիւն ու բարօ-
րութիւն կը բերէ բոլորիս անտարակոյս:

29 Յունուար, 2018

«Բայց ունիմք մեր զշնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ ազգս ազգս» (Հռոմ. ԺԲ. 6):

Առաքեալը կը շեշտէ այն մտածումը, որ մեզի տրուած շնորհներուն մէջ զանազանութիւն կայ: Ուրեմն, պարտ ենք մէկգմիւսէն սորվելու, մէկգմիւսին շնորհներով լուսաւորուելու: Սա ինքնին կը թելադրէ այն մտածումը, որ մէկգմիւսին վրայ առաւելութիւն չունինք եւ միայն միմեանցով ենք հարուստ ու ամբողջ:

Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութիւնը հրաշալի առիթ մը կ'ընձեռէ բոլորիս որ լռութեան օրերը մեր էութեանը մէջ խորացնենք գիտակցութիւնը թէ ինչքան հարուստ ենք հոգեւորապէս: Ուրեմն, իջնենք մեր հոգիին խորքը եւ այնտեղէն դուրս բերենք այն շնորհները, որոնց աղբիւրը Աստուած Ինք է:

29 Յունուար, 2018

«Եթէ մարգարէութիւն՝ ըստ չափոյն
հաւատոց » (Հռոմ. ԺԲ. 7):

Մեր էութեան խորքին պիտի տեսնենք հաւատքի չափով տրուած մարգարէութեան շնորհը: Ամէն մարդ իր մէջ ունի այդ կարողութիւնը: Եւ ինչ է մարգարէութիւնը, եթէ ոչ մտքին ու հոգիին տեսողութիւնը՝ գալիքը տեսնելու ու հասկընալու: Եւ եթէ դոյզն իսկ չափով այս գործողութիւնը սկսի գործել մեր մէջ, ապա կծիկը կը քակենք ներքին հոգեւոր կեանքին նոր թռիչքներուն: Վերջապէս ովքե՞ր են մարգարէները: Չե՞ որ անոնք ալ մեզ նման մարդիկ էին: Բայց անոնք լսեցին Աստուծոյ Խօսքը եւ առաջնորդեցին իրենց ժողովուրդը:

29 Յունուար, 2018

«Եթէ որ ուսուցանեն՝ ըստ վարդապետութեանն» (Հոռմ. ԺԲ. 7):

Ուսուցիչը՝ կոչումն ու կարողութիւնը ունի ուսուցանելու: Եթէ մեր կոչումը իր կատարեալ եղանակով կատարենք, ապա օրհնութիւն կը դառնանք ուրիշի կեանքին մէջ: Տեսակէտով մը բոլորս ալ ուսուցիչ ենք միմեանց համար: Եւ եթէ այս մօտեցումով ապրինք կեանքը ապա մէկգմիսին կեանքը կը լուսաւորենք:

Ուսուցանելը կոչում մըն է: Ուրեմն, կեանքն ապրինք որպէս ուսուցիչ, որպէսզի ամէն բանէ առաջ քարոզենք ու ուսուցանենք Աստուծոյ Խօսքը: Այս իսկ պատճառով, երբ աղօթքի ենք հրաւիրուած լսենք Աստուծոյ ձայնը եւ թող այն արձագանգէ մեր էութեանը մէջ մշտապէս:

29 Յունուար, 2018

«Եթէ որ մխիթարեն՝ ըստ մխիթարութեանն» (Հռոմ. ԺԲ. 8):

Մխիթարելու կարողութիւնը ունին յատկապէս այն մարդիկ, ովքեր իրենց մէջ առատօրէն կը զգան Ս. Հոգու ներկայութիւնը: Որովհետեւ ով հարուստ է Ս. Հոգու շնորհներով, ապա այդպիսին իրօք իր էութեանը մէջ ամուր կը զգայ մխիթարելու իր մէկ նմանին կեանքը բոլոր տեսակի պայմանների մէջ:

Մխիթարութեան պէտք ունին ոչ միայն տկարներն ու տառապանքի մէջ եղողները, այլեւ նաեւ այն մարդիկ, ովքեր կը հաւատան, եւ կ'ապաւինին իրենց իմաստութեան ու հարստութեան: Այդպիսիք պէտք ունին ուղղորդուելու, որպէսզի քայլեն Քրիստոսի հետ եւ ապրին խոնարհ կեանքով:

29 Յունուար, 2018

«Որ առատն է՝ զուարթութեամբ»
(Հռոմ. ԺԲ. 8):

Քրիստոնեան, երբ իր ունեցուածքը
կը բաշխէ, թող այն ըլլայ զուարթ սրտով:
Եւ խօսքը չի վերաբերիր միայն նիւթա-
կանին, նաեւ իմաստութեամբ, օգնակա-
նութեամբ եւ զանազան շնորհներով հա-
րուստ մարդկանց: Մեր բարոյական
պարտքը կատարենք զուարթառատ սր-
տով: Ո՞ւր է իմաստը տալուն, երբ այն կը
կատարենք պարտաւորեալ: Չէ՞ որ տալը
ինքնին առաքինութիւն մըն է: Ուրեմն,
մեր կեանքն ապրինք այս գիտակցու-
թեամբ եւ այն ժամանակ կը դառնանք
գործակից Աստուծոյ անդաստանէն ներս:

29 Յունուար, 2018

ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

Անառակ որդիին առակը ընթերցելով՝ մենք կը ճանչնանք Երկնաւոր Հօր իրական կերպարը, որ Իր կրտսեր որդիին շնորհեց կատարեալ ազատութիւն՝ ինչն արգասիքն է Իր անկեղծ սիրոյ: Անոր համար ականյայտ ճշմարտութիւն է, որ տունէն հեռու գտնուելու դէպքի ընթացքին որդին պիտի կրէ շատ դժուարութիւններ: Այդ իսկ պատճառով Հայրը, Իր սիրով դրդուած, խոչընդոտ չհանդիսացաւ Իր որդիին ետադարձ ճանապարհին: Այս առակին մէջ ամենից կարելորն Աստուծոյ ցուցաբերած վեհութիւնն, ամբողջական սէրն ու ողորմութիւնն է՝ տաճած Իր որդիին հանդէպ:

Առակի պատգամը կ'արտացոլէ մեր հաւատքի մեծագոյն խորհուրդը. Մենք չէ որ կ'ընտրենք զԱստուած, այլ Աստուած է որ մեզ կ'ընտրէ:

«Որ վերակացուն է՝ փութով» (Հռոմ.
ԺԲ. 8):

Վերակացութիւնը կատարենք լրջմտութեամբ: Մեզմէ իւրաքանչիւրը վերակացուն է իր կեանքին: Անհրաժեշտ է հսկել մեր կեանքին վրայ աղօթքով ու պահեցողութեամբ: Վերջիվերջոյ Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան գլխաւոր նպատակն է դառնալ վերակացու մեր կեանքին. հսկելու մեր ապրած կեանքին վրայ, որպէսզի մեր խօսքն ու գործը ըլլան Աստուծոյ հաճելի եւ մարդկանց համար ընդունելի:

Մեզմէ ամէն մէկը իր մէջ ունի զօրութիւն իր հոգեւոր կեանքին վրայ հսկելու: Գուցէ այդ պատճառով ալ Մեծ Պահքի երեկոյեան աղօթքները կը կոչուին «հսկում»:

30 Յունուար, 2018

«Որ ողորմին՝ լրջմտութեամբ» (Հռոմ.
ԺԲ. 8):

Երբ ողորմութիւն կու տանք այդ ըլ-
լայ լրջմտութեամբ, այսինքն՝ խոնարհ հո-
գով: Ով այս զգացողութեամբ կ'ապրի ու
կ'արժեւորէ իր կեանքը, փաստօրէն, կը
կատարէ Աստուծոյ կամքը:

Մեր առջեւ է դրուած Ս. Գիրքը, կեան-
քի գիրքը, որը հոգեւոր սնունդ կու տայ
մեր հաւատքի կեանքին: Ուրեմն, երբ
կ'աղօթես ու պահեցողութիւնը կեանքի
կը կոչես յարատեւօրէն, ապա կեանքդ
կը դառնայ նմանակից Քրիստոսի:

30 Յունուար, 2018

«Մեր առանց կեղծաւորութեան» (Հռով.
ԺԲ. 9)

Մերը Աստուծոյ տուած պարգէնն է
եւ այն պարտինք փոխանցել եւ ցոյց տալ
բոլորի հանդէպ առանց կեղծաւորու-
թեան: Մերը այն շնորհն է, որ լոյս կու
տայ մեր հոգեւոր էութեան եւ երբ աղօ-
թանուէր կեանքով կ'ապրինք, ապա մեր
էութեան ընդմէջէն կը ճառագայթէ սէրը
եւ լոյս կը տարածէ բոլորին վրայ: Երջա-
նիկ պէտք է զգայ այն մարդը, որ անմնա-
ցորդ ու անպայմանական սէր կը բաշխէ
բոլորին: Եթէ Աստուած սէր է, ապա
ինչո՞ւ չփորձենք գէթ դոյզն իսկ չափով
նմանիլ Անոր: Ներքին այդ փափաքը ար-
դէն բաւական է ունենալ եւ այն ժամա-
նակ պիտի զգանք, որ ինչքան մօտեցած
ենք Աստուծոյ:

30 Յունուար, 2018

«Մեր առանց կեղծաւորութեան» (Հռոմ.
ԺԲ. 9)

Մերը արմատն է քրիստոնէութեան
եւ նոյնքան եւս արմատը պէտք է ըլլայ
մեր աղօթքի կեանքին, որով եւ կը պայ-
մանաւորուի նաեւ խաղաղ ընթացքը մեր
հոգեւոր կեանքին:

Երբ կը կարդանք Շնորհալի Հայրա-
պետի աղօթքը՝ նուիրուած քրիստոնեայի
սիրոյ, այն ժամանակ առաւել եւս կը գի-
տակցինք այն ճշմարտութեան, որ սերը
պէտք է ըլլայ մղիչ ոյժը մեր հոգեւոր
կեանքի:

Մեր անուն Յիսուս

Սիրով Քով ճմլեա

Սիրտ իմ քարեղէն

Ուրեմն, Քրիստոսի սիրով պարու-
րենք մեր հոգին՝ գիշեր եւ ցերեկ:

7 Փետրուար, 2018

«Ատեալ զչար, զհետ երթալ բարեաց»
(Հռոմ. ԺԲ. 9):

Արդարեւ, երբ աղօթքի մէջ ենք, ապա մեր մէջ կը զգանք քաջութիւնը ատելու չարը եւ մեր քայլերը կ'ուղղորդենք հետեւելու բարիին: Աղօթքի զօրութիւնն է սա, որուն որպէս հետեւանք մենք կը կարողանանք իջնել մեր հոգիին մինչեւ խորքը եւ այնտեղ բոյն գտած օտար խորհուրդները, Աստուծոյ աչքին ոչ հաճելի մտածումներն ու արարքները արմատախիլ ընելու եւ անոնց փոխարէն սերմանելու բարին: Այս ալ պէտք է ըլլայ մեր կեանքի նպատակը. «Ատել չարը եւ հետեւիլ բարիին»:

30 Յունուար, 2018

«...զիետ երթալ բարեաց» (Հռոմ. ԺԲ.9)

Հետամուտ ըլլանք բարիք գործելու։
Երբ Աւետարանէն ճառագայթող պատ-
գամներով է լեցուած մեր կեանքը, ան-
տարակոյս մեր խօսքն ու, մանաւանդ,
գործերը կը կրեն բարութեան ոգին։

Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհոր-
դութեան ընթացքին մեր կեդրոնացումը
աւելիով պէտք է պահենք Քրիստոսի
կեանքին եւ Անոր վարդապետութեան
վրայ, որպէսզի իրօք հետամուտ ըլլանք
բարիք գործելու ու ապրելու Քրիստոսի
նմանակցութեամբ։

ԱՆԻՐԱԻ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԸ

Անհրաւ տնտեսի առակը երբ կը կար-
դանք մեր առաջին տպաւորութիւնը դրա-
կան չէ, քանի որ տնտեսը, որուն վստահ-
ուած էր որոշակի պարտաւորութիւն,
անարդար վարուեցաւ: Խորքին մէջ, սա-
կայն, այս առակը մեզի կը սորվեցնէ
պարզ ճշմարտութիւն մը, որ բոլորս
հաշուետու ենք, թէ՛ այս եւ թէ՛ հանդերձ-
եալ աշխարհներուն համար: Մեզմէ իւրա-
քանջիւրին, անկասկած, պատասխանա-
ւորութիւն է տրուած մեր ամբողջ
կեանքի ընթացքին, որ մենք պետք է
ջանասիրաբար կատարենք: Եւ ինչպէս
անհրաւ տնտեսը, այնպէս ալ մենք, օր
մը պիտի սայթաքինք, սակայն բարեգութ
Աստուած պիտի շարունակէ մեզի պար-
գելել իր շնորհները, որպէսզի կարողա-
նանք վերադառնալ Իրեն:

«Յեղբայրսիրութեան առ միմեանս
գրածք. ի պատիւ զմիմեամբք ելանել»
(Հռոմ. ԺԲ. 10)

Եղբայրսիրութիւնը Աստուծոյ աչքին
կեանքի հաճելի ընթացք մըն է: Ինչքան
այս պատգամը կրկնենք մեր աղօթքնե-
րուն մէջ, ապա այնքան արմատ կը նե-
տէ այդ մեր հոգեւոր էութեանը մէջ: Աշ-
խարհն այսօր կը տառապի, որովհետեւ
եղբայրսիրութիւնը օրէցօր կը նուազի
մարդկանց մօտ: Եղբայրսիրութիւն կը
նշանակէ յարգանք մէկգմիւսին նկատ-
մամբ, գթառատ վերաբերմունք բոլորին
հանդէպ: Ուրիշ խօսքով, եղբայրսիրու-
թիւնը կոչում է, որուն պէտք է պատաս-
խանենք սիրով եւ հաւատքի գործերով:
Եղբայրսիրութիւնը՝ Աստուծոյ կամքն է,
հետեւաբար, կատարենք Աստուծոյ կամքը:

30 Յունուար, 2018

«Ի փոյթ՝ մի՛ վեհերոտք. Հոգւով եռացէք» (Հոռմ. ԺԲ. 10):

Առաքեալը մեզ կը յիշեցնէ այն մասին, որ բոլորիս կեանքը լեցուն է Ս. Հոգւոյ շնորհներով: Ուրեմն, ի՞նչ կը սպասուի մեզմէ, եթէ ոչ գիտակից դառնալ այն մեծ պարգեւին, որ Ս. Հոգւոյ ներկայութիւնն է մեր հոգեւոր կեանքի մէջ: Երանելի է մարդը, երբ այս գիտակցութեամբ գիտէ լուսաւորել իր կեանքը եւ աւելին՝ նոյն լոյսով կը կարողանայ լուսաւորել նաեւ մարդկանց կեանքը:

Հոգւով եռացէք: Այս է նաեւ նպատակը Մեծ Պահքին, որպէսզի Ս. Հոգւոյ շնորհներով կատարեալ պահենք մեր կեանքը:

30 Յունուար, 2018

«Տեառն ծառայեցեք» (Հոռմ. ԺԲ. 12):

Երբ մեր կեանքը կը դառնայ արտայայտութիւնը Աստուծոյ ծառայութեան, ապա արժէտորած կ'ըլլանք զայն: Եւ այդ իսկ է նպատակը կեանքին, որ մենք մեր հոգեւոր կապը մշտապէս ամուր պահենք Աստուծոյ հետ եւ այն արտայայտենք ծառայութեամբ:

Ով Տիրոջ կը ծառայէ, ապա այդպիսին իր ծառայութիւնը անձնուիրաբար կը բերէ նաեւ մարդկութեան: Այդպիսին, փաստօրէն, ոչ միայն կրողն է Աստուծոյ սիրոյն, այլեւ՝ բաշխողը աստուածային պարգեւաց:

7 Փետրուար, 2018

«Յուսով խնդացէք» (Հռոմ. ԺԲ. 12):

Յոյսը քրիստոնէական առաքինութիւն մըն է: Քրիստոնէան Ս. Աւագանի մկրտութեամբ կ'ընդունի այս պարգեւը, որպէսզի իր բովանդակ կեանքի ընթացքին Յոյսը դարձնէ հիմնաքարը իր առօրեայի խօսքերուն եւ արարքներուն մէջ: Յոյսը՝ կեանք է: Յոյսը ճշմարիտ է, երբ մենք մեր ապաւէնը կը դարձնենք Ամենակարողն Աստուած: Ուրեմն, յոյսի արմատը Աստուած Ինք է: Այն կեանքը որ հաստատուած է Աստուծոյ վրայ, այդ նոյն կեանքը իր ընթացքը կ'առաջնորդէ ճշմարիտ ճանապարհներով:

Յուսով խնդացէք: Յոյսը՝ աղբիւրն է ուրախութեան եւ նոր կեանքի ի Քրիստոս:

30 Յունուար, 2018

«Նեղութեան համբերեցէք» (Հռոմ.
ԺԲ.12)

Նեղութիւնները մարդկանց կեանքին մէջ անխուսափելի են, բայց երբ աղօթող ենք, ապա համբերութեամբ կը յաղթենք բոլոր տեսակի նեղութիւնները: Մարդը իր հոգեւոր էութեանը մէջ անկասկած ունի աստուածադիր զօրութիւնն ու իմաստութիւնը, որոնցմով եւ կը կարողանայ վեր կանգնիլ եւ մէկդի դնել դժուարութիւնները եւ նեղութիւնները: Եւ ինչքան համբերող ըլլանք կեանքին մէջ, ապա այնքան կը զօրանանք ի Քրիստոս: Ուրեմն, լսենք Առաքեալի խօսքը եւ ըլլանք համբերող կեանքի բոլոր տեսակի նեղութեանց հանդէպ:

30 Յունուար, 2018

«Աղօթից ստեպ կացեք» (Հռոմ. ԺԲ. 12)

Աղօթքը իր բարերար դերը կ'ունենայ մեր կեանքին մէջ, երբ յարատեւօրէն աղօթող ենք: Չէ՞ որ Քրիստոս այդ նոյնը քարոզեց եւ ըսաւ. «Յամենայն ժամ յաղօթս կացեք եւ մի՛ ձանձրանայցեք»:

Աղօթքը՝ Աստուած եւ մարդ յարբերութեանց առանցքն է ու կամուրջը: Աղօթող մարդը իր առօրեայի ընթացքին կը գտնէ Աստուծոյ ներկայութիւնը: Բայց չմոռնանք այն ճշմարտութիւնը, որ Աստուած միշտ ներկայ է մեր հոգեւոր էութեանը մէջ: Պարզապէս որպէս հետեւանք մեր տկար էութեան յաճախ կը հեռանանք Աստուծմէ՝ կամայ թէ ակամայ:

30 Յունուար, 2018

ԴԱՏԱԻՈՐԻ ԿԻՐԱԿԻ

«Մարդ պետք է աղօթէ եւ չձանձրանայ»:

Այս խօսքերը մեր Տէր Յիսուս Քրիստոսի խօսքերն են՝ ուղղուած բոլորիս: Ասոնք մեր Փրկչի ապրած խօսքերն են, Անոր աղօթաբոյր հոգու ճշմարիտ օրինակը: Աղօթքի կարեւորութիւնը մարդ անհատին կեանքին մէջ կարեւորելու համար, Տէրը պատմեց մեզ այրի կնոջ եւ անիրաւ դատաւորի առակը, որ արձանագրուած է Ղուկասի աւետարանի 18-րդ գլխուն մէջ: Ուշադիր կարդալով այն, մենք այնտեղ կը գտնենք Յիսուսի պատգամը՝ արտայայտուած այրի կնոջ կեանքին մէջ: «Մարդ միշտ պետք է աղօթէ եւ երբեք չձանձրանայ»: Առակը կ'օգնէ մեզի վերանորոգելու մեր քրիստոնէական հաւատը եւ ոգեւորում է բոլորիս հաստատ մնալու մեր աղօթքներում:

«Աղօթից ստեպ կացեք» (Հռոմ. ԺԲ. 12)

Աղօթքը՝ մեր հոգեւոր կեանքի շարժիչն է: Աղօթքով է, որ կ'ապրի մարդու հոգին: Աղօթքի մէջ է, որ կը վերածնինք մշտապէս եւ աղօթքի մէջ է, որ կ'աճի նաեւ մեր կեանքը:

Քրիստոս Ինք աղօթեց եւ մեզ տուաւ բարի օրինակը աղօթանուէր կեանքի: Կը բաւէ որ հետեւինք Անոր կեանքի օրինակին, եւ այն ժամանակ պիտի ապրինք Աստուծոյ թագաւորութիւնը մեր էութեանը մէջ:

7 Փետրուար, 2018

«Ի պէտս սրբոց հաղորդեցարուք»
(Հռոմ. ԺԲ. 13):

Սուրբերու հետ հաղորդութիւնը անհրաժեշտ է: Երբ կ'աղօթենք, ապա սուրբերու միջնորդութիւնը կը խնդրենք: Երբ կ'աղօթենք, ապա խոստում կը կատարենք հետեւելու սուրբի կեանքին բարի օրինակին:

Սուրբերը իրենց կեանքով են ձեռք բերած իրենց նկարագիրը: Սուրբերը չեն ծնիր, այլեւ մարդիկ իրենց առաքինի կեանքով սուրբ կը դառնան: Այս ոգին պիտի ըլլայ նաեւ հրաւերը Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան:

Սուրբերու հետ հաղորդութեամբ կը սրբենք նաեւ մեր կեանքը:

Այս բոլորով հանդերձ, առաքեալը մեզ կը պատգամէ որոշապէս, որ հաղորդակից դառնանք սուրբերու կարիքներուն: Այս պարագային սուրբերը հաւատացեալներն են:

«Զհիրասիրութեան զհետ երթայք»
(Հռոմ. ԺԲ. 13):

Հիրասիրութիւնը գեղեցիկ արարք մըն է: Երբ մարդկանց կը դիմաւորենք հիրասիրութեամբ ըլլայ այն մեր տուններէն ներս եւ թէ եկեղեցիէն ներս, ապա մենք կատարած կ'ըլլանք Աստուծոյ կամքը:

Հիրասիրութիւնը պիտի ունենայ քրիստոնէական բովանդակութիւն: Այլ խօսքով հիրընկալողի դերին մէջ ըլլալով մենք փաստօրէն միմեանց կը դիմաւորենք սիրով: Ուրեմն, ըլլանք հետամուտ հիրասիրութեան, մանաւանդ՝ եկեղեցւոյ մէջ, որպէսզի կազմաւորենք նաեւ համայնքը՝ ի գլուխ ունենալով Քրիստոս:

30 Յունուար, 2018

«Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք եւ մի՛ անիծանէք» (Հոռմ. ԺԲ. 14):

Օրհնել հալածողները եւ երբեք անեծք չկատարել: Աղօթողը անտարակոյս հոգեւորապէս ի վիճակի է օրհնելու իրեն հալածողը: Կը նշանակէ, որ աղօթքի մէջ մնալով փոխած ենք մեր կեանքի ընթացքն ու վերաբերմունքը նոյնիսկ այն մարդկանց հանդէպ, ովքեր մեզ կը հալածեն եւ չարութեամբ կը խանգարեն մեր կեանքը:

Օրհնութիւն բաշխելը աստուածային արարք է: Ով կ'օրհնէ իրեն հալածողը, ապա այդպիսին գործնապէս ցոյց կուտայ իր քրիստոնէական սէրը:

30 Յունուար, 2018

«Խնդալ ընդ խնդացողս, լալ ընդ լացողս» (Հռոմ. ԺԲ. 15):

Առաքելալի այս պատգամը ուսուցողական բնոյթ ունի, որն ուղղուած է անխտիր բոլորիս, որպէսզի կեանքի մեր ընթացքը կարողանանք հաշտեցնել մեր զրուցակիներուն հետ: Յաճախ ներկայ ենք բարեկամի մը հետ, երբ ան ցաւի մէջ է: Այդ ժամանակ պէտք է ունենանք գթառատ սիրտ: Իսկ երբ պարագաները այլ են եւ մեր բարեկամն ուրախութեան մէջ է, ապա մենք այս ժամանակ խնդակից ենք անոր: Այս կեցուածքները կրնան ունենալ այն մարդիկ, ովքեր հաւատքով են լեցուցած իրենց կեանքը:

31 Յունուար, 2018

«Զնոյն միմեանց խորհիջիք» (Հռոմ.
ԺԲ.16)

Աղօթող քրիստոնեան կը ցանկայ համերաշխ կեանք ունենալ իր նմաններուն հետ: Խաղաղութեան շունչն ու ոգին մեր մէջէն կ'արտացոլեն միայն այն ժամանակ, երբ աղօթքով օծուն է մեր ներքին էութիւնը: Աղօթքը կատարողը իր նմանին բարին կը ցանկայ, այնպէս ինչպէս ինք պիտի ունենար այդ պատեհութիւնը: Ուրեմն, տեսնենք թէ ինչպիսի պարգեւներ կը շնորհէ աղօթքը մեզի: Մարդն ամէն օր պիտի ապրի աղօթքով, որպէսզի մեր էութեանը մէջ արմատանայ բարի կեանքով մը ապրելու ձգտումը:

31 Յունուար, 2018

ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի գալուստը կը հանդիսանայ քրիստոնէական հաւատքի առանցքը: Եթէ այս ճշմարտութիւնը դուրս հանենք մեր հաւատամքէն, մեր ամբողջ քրիստոնէական հաւատքն ու վարդապետութիւնը կը փլուզուի:

“Լոյս ճշմարիտ՝ Քրիստոս, արժանացուր հոգիս այն կոչման օրը ուրախութեամբ տեսնելու Քու լոյսը եւ արդարներու օթեւաններուն մէջ հանգչելու բարեյոյս, մինչեւ Քու գալստեանդ մեծ օրը...”

Սուրբ Ներսէս Շնորհալու այս աղօթքին մէջ մէկ անգամ եւս կը յիշեցնէ մեր Տիրոջ երկրորդ գալստեան մասին: Յիսուս Ինքը յայտնեց մեզի այս մեծ ճշմարտութիւնը: Որպէս քրիստոնէաներ, մենք խոր հաւատքով եւ մեծ ակնկալիքներով կը սպասենք Տիրոջ երկրորդ գալստեան: Այս հաւատքը կ'օգնէ աստուածահաճոյ կեանք ապրիլ եւ գիտակցիլ, որ որպէս

Աստուծոյ որդեգիր զաւակներ՝ ստացած
ենք մեր կեանքին մէջ Քրիստոսի ներկա-
յութիւնը զգալու շնորհները եւ պարգեւը:

«Մի՛ ամբարտաւանեք, այլ ընդ խոնարհս զիջանիցիք. մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր» (Հռոմ. ԺԲ. 16):

Խոնարհութիւնը մեր էութեան մէջ կը ծնի, երբ աղօթքով է լեցուն մեր հոգին եւ առաջնորդուած ենք աղօթքով: Ինչ հրաշքներ կը գործէ աղօթքը մարդուն կեանքին մէջ: Աղօթքը մեզ կը միացնէ Աստուծոյ հետ: Աղօթքին մտատիպարը մեզի կը ներկայանայ Քրիստոսի Անձին մէջ: Աղօթողը առաւելագոյնս կ'ըմբռնէ իմաստը խոնարհութեան: Եւ գերագոյն երջանկութիւնը կ'ապրին խոնարհ սրտով մարդիկ: Ուրեմն, թող այս քանի մը սահմանումները մեզ մտածել տան թէ ինչքանով խոնարհ ենք սրտով եւ հետեւող Քրիստոսի օրինակին որպէս քրիստոնեաներ:

3 Փետրուար, 2018

«Մի՛ ումէք չարի չար հատուցանէք.
խորհեցարուք զբարիս առաջի ամենայն
մարդկան» (Հոռմ. ԺԲ. 17):

Կեանքին մէջ շատ յաճախ զոհ կը
դառնանք չարութեան: Բայց տեսէք թէ
ինչ կը պատգամէ Առաքեալը: Չարին
չարութեամբ չպատասխանենք, այլեւ՝
բարութեամբ: Երբ մեզի չարութիւն կը
հասնի եւ մենք բարութեամբ կը պա-
տասխանենք մեր դիմացինին, ապա բա-
րոյական յաղթանակ մը տարած կ'ըլ-
լանք եւ ընդհուպ մինչեւ իսկ դիմացինը
կ'առաջնորդենք դէպի նոր կեանք, որ
համաձայն կ'ըլլայ Քրիստոսի Աւետա-
րանին սկզբունքներուն:

3 Փետրուար, 2018

«Եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք» (Հռովմ. ԺԲ. 18):

Քրիստոսի հաւատացեալը անկասկած ունի հնարքը խաղաղութեան սերմեր ցանելու մարդկանց կեանքին մէջ: Եւ, վերջ ի վերջոյ, ո՞րն է նպատակը քրիստոնէութեան, եթէ ոչ պահպանել Աստուծոյ շնորհած խաղաղութիւնը:

Աշխարհի անդորրը խանգարողը մարդն է, եւ աղօթքով ապրող մարդիկ առաջքը պիտի առնեն նման ընթացք արձանագրող մարդկանց, որպէսզի խաղաղութիւնը վերահաստատուի ամենուրեք: Եւ արմատը բոլոր չարեաց նիւթն ու ազահութիւնն է: Ուրեմն, քարոզենք Քրիստոսի Աւետարանը եւ արդիւնքը պիտի ըլլայ խաղաղութիւնը:

3 Փետրուար, 2018

«Մի՛ զանձանց վրեժ խնդրեք, սիրելիք, այլ տուր տեղի բարկութեան, քանզի գրեալ է, իմ է վրեժխնդրութիւն, եւ ես հատուցից, ասէ Տէր» (Հռոմ. ԺԲ. 19):

Վրեժխնդրութիւնը քրիստոնէութեան ոգուն դէմ երեւոյթ մըն է: Քրիստոնէան չի կրնար վրժելիանդիւր ըլլալ, եւ ինքզինքին արտօնելու բարկութեան: Ինչքան ալ հասկնանք այս ճշմարտութիւնը անշուշտ որպէս մարդկային տկար արարածներ թերութիւն կ'արձանագրենք: Բայց այնքան ժամանակ մեր աղօթքի կեանքով մեր հայեացքը կ'ուղղենք դէպի Քրիստոս, այն ժամանակ կը կարողանանք արմատապէս սրբագրել մեր կեանքը:

3 Փետրուար, 2018

«Այլ եթէ քաղցեալ իցէ թշնամին քո, հաց տուր նմա, եւ եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա. զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտակեցես ի գլուխ նորա» (Հռոմ. ԺԲ. 20):

Գթութիւնն ու ողորմութիւնը պէտք է դրսեւորենք անխտիր բոլորի նկատմամբ: Ինչպէս առաքեալը կը պատգամէ, նոյնիսկ թշնամիին հանդէպ պէտք է սէր ու գուրգուրանք տաճել, երբ ան անօթի է: Հաց մատակարարել թշնամիին, կը նշանակէ Աստուծոյ սէրը բաշխել եւ սակայն, մենք աւելիով կատարած կ'ըլլանք այդ արարքով: Թշնամիին հաց տալով անոր մէջ կ'արմատաւորենք բարոյական կեանքի գիտակցութիւնը:

3 Փետրուար, 2018

«Մի՛ յաղթիր ի չարէ, այլ յաղթեա
բարեան չարին» (Հռոմ. ԺԲ. 21):

Չարը արմատախիլ կրնանք ընել,
երբ բարութիւն կը տարածենք մեր շուրջը:
Բարութեամբ յաղթել չարը, հաւասար է
հրաշքի: Ուրեմն, չըսենք որ մեր օրերուն
հրաշքներ չկան: Հրաշքները ամէն օր եւ
ամէն տեղ կը կատարուին: Պէտք է տես-
նել եւ մանաւանդ պէտք է դառնանք
ճարտարապետը հրաշքին: Ուրեմն, լսենք
Առաքեալի խօսքերը, որովհետեւ կեանք
կը հաղորդեն այդ պատգամները:

3 Փետրուար, 2018

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի յաղթական մուտքը Սուրբ Երուսաղէմ, նոր Ծաղկազարդ կը վերարթնացնէ մեր մէջ, որու ընթացքին աշխարհի Փրկիչն ու Տէրը կը մտնէ մեր հոգիներէն ներս: Դիմաւորելով Քրիստոսին, մենք կը խնամենք մեր հոգիի մէջ արմատացած աստուածային զօրութիւնը:

Իսկ ինչպէս կարելի է մեր հոգիներէն ներս ընդունիլ Երուսաղէմ Սուրբ քաղաքէն ճառագայթող ցնծութիւնը:

Շատ պարզ, գացէք եկեղեցի, հետեւեցէք երեխաներու կազմած թափօրին, ուշադրութիւն դարձուցէք անոնց աղօթքներուն եւ լեցուցէք ձեր սրտերն ու հոգիները անոնց զուարթ ներկայութեամբ: Այդ ընելով, դուք ձեր հոգիներուն մէջ կը վերակազմէք Քրիստոսի ներկայութիւնը եւ ձեր սրտերը կ'ուղղէք Երուսաղէմ սուրբ քաղաքին:

GREAT LENT

**“O, Lord, You are my refuge,
Teach me to fulfill Your will,
For You are my God.”**

The Great Lenten journey is the special timeframe in the life of the Christian person, when we wholeheartedly surrender ourselves in the hands of the Almighty God, so that led by prayer and fasting, through solitude, we uplift ourselves to God, with the vision to live our lives with a new vision and to live the true purpose of our lives to better understand the Miraculous Resurrection of Christ, our Lord, who is in the destiny of our spiritual journey.

**“O, Lord, You are my refuge,
Teach me to fulfill Your will,
For You are my God.”**

The words of this prayer renew our spirituality, and lead our lives in search of the destiny of the Great Lent with a greater preparation.

**“O, Lord, You are my refuge,
Teach me to fulfill Your will,
For You are my God.”**

